ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան 2501,
Կ.Դեմիրճյանի անվ. հրապարակ 1,
Հեռ.՝ (226) 43434, էլ. փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

«ԱՐՄ-ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ ՏԻԿԻՆ Կ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

N 137
24 հունվար 2024թ.

Հարգելի՛ տիկին Հովհաննիսյան,

Համաձայն 2023 թվականի օգոստոսի 07-ին Չարենցավանի համայնքապետարանի և «ԱՐՄ-ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված Չարենցավան համայնքի կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական աշխատանքների կատարման թիվ «ՉՀ-ԲՄԽԱՇՁԲ-2023/4» պայմանագրի՝ «ԱՐՄ-ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավորվել է կատարել պայմանագրով նախատեսված աշխատանքները մինչև 2023 թվականի սեպտեմբերի 21-ը ներառյալ, սակայն մինչ օրս չի կատարել:

«ԱՐՄ-ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2024 թվականի հունվարի 23-ի թիվ 361/04 գրությամբ Պատվիրատուին հայտնել է այն մասին, որ հրաժարվում է կատարել 2023 թվականի օգոստոսի 07-ին Չարենցավանի համայնքապետարանի և «ԱՐՄ-ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված թիվ «ՉՀ-ԲՄԽԱՇՁԲ-2023/4» պայմանագիրը:

Հիմք ընդունելով 2024 թվականի հունվարի 23-ին «ԱՐՄ-ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված թիվ 361/04 գրությունը՝ Չարենցավանի համայնքապետարանը միակողմանի ամբողջությամբ լուծում է 07.08.2023թ. կնքված թիվ «ՉՀ-ԲՄԽԱՇՁԲ-2023/4» պայմանագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՀԱԿՈԲ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

Կատ. համայնքի ղեկավարի գլխավոր խորհրդական՝ Վ. Չիլինգարյան